ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտի 1 **հեռ. +(374 11) 514-240**

№ Հ/1011
28-07-2023

«Հետք»-ի լրագրող Արեն Նազարյանին
Հարգելի պարոն Նազարյան,
ի պատասխան Ձեր հարցման՝ նախ հայցում ենք ներողամտություն՝ հարցմանը ուշացումով պատասխանելու համար: Տեղեկացնում ենք, որ Երևան քաղաքում ինքնակամ կառույցների օրինականացումը իրականացվում է ՀՀ կառավարության 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» 18.05.2006թ. հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներին և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:
Համաձայն ՀՀ կառավարության «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» 18.05.2006թ. հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի 28-րդ կետի, բազմաբնակարան շենքի ծավալում կատարված ինքնակամ կառույցների՝ վերնասրահների, նկուղների, դռների, պատուհանների և շենքի ծավալում գտնվող այլ ձևափոխումների օրինականացման նպատակով (եթե դրանց արդյունքում փոփոխվում է սեփականատերերի բաժնային սեփականությունը) շենքի սեփականատերերը կամ նրանց լիազորած անձինք դիմում են համայնքի ղեկավարին՝ դիմումին կցելով շենքի բոլոր բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերի համաձայնությունը: Դիմումին կից ներկայացվում է նաև ինքնակամ շինության տեխնիկական վիճակի մասին եզրակացությունը:
Հայտնում ենք նաև, որ Երևանի քաղաքապետարանը սեփական նախաձեռնությամբ Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերում իրականացված ինքնակամ կառույցների հաշվառում չի իրականացնում: Աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչությունից էլ տեղեկացնում են, որ Կենտրոն վարչական շրջանի, Ձորագյուղ թաղամաս հ.21/1, Տերյան փողոց հ.59 շենքի ձեղնահարկ, Թումանյան փողոց հ.64Ա շենք հ.9 և Պուշկինի փողոց հ.51 շենք հ.31 հասցեներում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների կողմից վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի շրջանակներում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի իրականացված ինքնակամ շինարարական աշխատանքների կապակցությամբ կազմվել են վարչական արձանագրություններ: